ՍԱՄՎԵԼ ԽՈՒԴՈՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կրառական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր

ՍԱԹԵՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ

ՍԵՌԱՅԻՆ ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔԸ, ԴՐԱ ՖՐՈՒՍՏՐԱՑԻԱՆ և ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Հոդվածում ներկայացվում է սեռային ինքնահաստատման պահանջմունքի հիմնախնդիրը, ներկայացվում վերջինիս վերաբերյալ տեսական վերլուծություն հոգեբանական գիտակարգում առկա հետազոտողների աշխատանքներից:

Շեշտադրվում է սեռային ինքնահաստատման պահանջմունքի առկայությունը անձի սոցիալականացման գործընթացում, որի ֆրուստրացիայի արդյունքը պատճառ կարող է դառնալ դեռահասության տարիքի ճգնաժամերի:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ սեռային ինքնահաստատում, սեռային ինքնագիտակցություն, ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիա, ճգնաժամերի ֆրուստրացիոն տեսություններ, դեռահասության ճգնաժամ:

«Սեռային ինքնահաստատում» հասկացությունն այնքան էլ տարածված չէ հոգեբանության մեջ. օրինակ՝ հոգեբանական բառարաններում այն բացակայում է: Ռուսալեզու գիտական գրականության մեջ էլ այն բավական հազվադեպ է հանդիպում: Նույնիսկ Ն.Ե. Խարլամենկովայի դեռահասների ինքնահաստատմանը նվիրված աշխատության մեջ «Սեռային ինքնահաստատում» հասկացությունը չի օգտագործվում: Անշուշտ, մի շարք հեղինակներ օգտագործում են հասկացությունը: Այսպես, Վ.Ա. Բրանենկոն և Լ. Ա. Ռապոպորտը, խոսելով դեռահասության–պատանեկության տարիքում ինքնահաստատման մասին, գրում են. «Այդ շրջանում հիմնականում սեռական վարքի տարբեր ձևերով տեղի է ունենում սեռային պատկանելության և հասունության ինքնահաստատում» [1, էջ 159]: Գրականության մեջ հանդիպում է նաև «Սեռային դերի մեջ ինքնահաստատում» հասկացությունը [6], որը, ըստ էության, նույնպես սեռային ինքնահաստատումն է բնութագրում: Մի շարք աշխատություններում խոսվում է կնոջ և տղամարդու ինքնահաստատման մասին, նկարագրվում են ինքնահաստատման սեռային առանձնահատկությունները, տարբերությունները, ինչն ըստ էության, սեռային ինքնահաստատման հիմնախնդրի հետազոտություններ են [3, 4]: Ե.Վ. Սոկոլինսկայան և Ն.Վ. Դվորյանչիկովն օգտագործում են «Սեռային ես–ի ինքնահաստատում» հասկացությունը և դիտում են այն որպես սեռային ինքնագիտակցության բաղադրիչ [8]: Ի. Կոնը օգտագործում է «սեռային ինքնահաստատում» հասկացությունը, այն դիտելով որպես սեռային ինտիմ հարաբերությունների բնութագիր [5]: Ինչպես տեսնում ենք, «Սեռային ինքնահաստատում» հասկացությունը հոգեբանական գիտության մեջ ուրվագծվել է, սակայն հստակորեն

մեկնաբանված, սահմանված չէ, երևույթը բազմակողմանի հետազոտության ենթարկված չէ, չկան հիմնախնդրի հետ կապված տարիքային–հոգեբանական հետազոտություններ, մասնավորապես նվիրված դեռահասության տարիքին, որը սեռային ինքնագիտակցության, սեռային վարքի ու հարաբերությունների ձևավորման, սեռային դերերի յուրացման և հատկապես սեռային ինքնահաստատման կարևորագույն շրջան է:

Ըստ մեզ, չափազանց կարևոր է տարբերակել ինքնահաստատման ընդհանուր (մարդն ինքնահաստատվում է որպես անձ ընդհանրապես) և մասնավոր դրսևորումները՝ տեսակներն ըստ ոլորտների, ասենք, սեռային ինքնահաստատումը, մասնագիտական ինքնահաստատումը և այլն: Ըստ որում, այս ոլորտներն առանձնացված են, հատկապես լավ է ուսումնասիրված մասնագիտական ինքնահաստատման երևույթը: Ինքնահաստատման յուրաքանչյուր տեսակ ունի իր բնութագրերը և տարիքային առանձնահատկությունները: Ստորև մենք կփորձենք ուրվագծել սեռային ինքնահաստատման և դեռահասության տարիքում դրա դրսևորման վերաբերյալ մեր պատկերացումները: Սեռային ինքնահաստատումը, ըստ մեզ, իր և ուրիշների աչքում սեփական անձի արժևորումն է որպես տղամարդ/կին և իր շրջապատում, միկրոմիջավայրում սեռային առումով որոշակի ստատուսի ձեռքբերումը և վերաբերմունքի ձևավորումը: Ցանկացած անձի մեջ կարելի է առանձնացնել սեռային ես–կոնցեպցիա՝ սեփական անձի, որպես տղամարդու/կնոջ վերաբերյալ պատկերացումների համակարգը: Այդ ես–կոնցեպցիայում, ինչպես ընդհանուր ես–կոնցեպցիայի մեջ, կարելի է առանձնացնել սեռային ինքնագնահատականը՝ կոգնիտիվ և աֆեկտիվ բաղադրիչներով և ինքնավերաբերմունքը: Սեռային ինքնագնահատականի կոգնիտիվ բաղադրիչ ասելով, նկատի ունենք անձի ինքնագնահատումը որպես տղամարդ/կին(ես գեղեցիկ եմ, տգեղ եմ, լավն եմ, վատն եմ, հրապուրիչ եմ գեղեցիկ կառուցվածք ունեմ և այլն): Սեռային ինքնագնահատականի զգացական բաղադրիչը սեփական անձի գնահատականի, արժեքի զգացումն է, ասենք, հպարտության, անլիարժեքության, մեծամտության, ինքնավստահության և նմանատիպ զգացումներով: Սեռային ինքնավերբերմունքն անձի վերաբերմուքն է սեփական անձի որպես տղամարդու/կնոջ նկատմամբ(ասենք, ինքնահարգանքը, տղամարդկային կամ կանացի արժանապատվության զգացումը, ինքնասիրահարվածությունը կամ ինքնաատելությունը որպես տղամարդ կին): Սեռային ինքնահաստատումը, ըստ էության, սեռային ինքնագնահատականի և ուրիշների կողմից անձին որպես տղամարդ/կին տրվող գնահատականի բարձրացման ուղիներից մեկն է և ունի հետևյալ ֆունկցիաները. ա/ ինքնահաստատման պահանջմունքի բավարարումը և սեփական ես–ի որպես սեռային ակտիվության սուբյեկտի բարեհարմար զգացողության, ինքնահարգանքի ապահովումը, բ/ սեռային հարաբերությունների ոլորտում նույն և հակառակ սեռի անձանց կողմից դրական գնահատականի և վերաբերմունքի ապահովումը, գ/ նույն և հակառակ սեռի խմբերում ավելի բարձր դիրքի, ստատուսի ձեռքբերումը, դ/ սեռային ակտիվության ոլորտում հավակնությունների բարձրացումը և խնդիրների ավելի հաջող լուծումը:

Սեռային ինքնագնահատականի և ինքնահաստատման ձգտման ինտենսիվության միջև ուղղակի կապ կա: Ըստ որում, կարծում ենք, որ որքան ցածր է սեռային ինքնագնահատականը, այնքան ինքնահաստատման ձգտումն էլ է թույլ դրսևորվում և հակառակը: Թերևս նշանակություն ունի նաև ինքնագնահատա-

կանի կայունությունն ու անկայունությունը՝ որքան ավելի անկայուն է սեռային ինքնագնահատականը, այնքան ավելի ինտենսիվ է ինքնահաստատման ձգտումը և հակառակը:

Սեռային ինքնահաստատումն ունի որոշակի տարիքային առանձնահատկություններ. օրինակ, մինչև նախադպրոցական տարիքը սեռային ինքնահաստատումը շատ թույլ է դրսևորվում կամ ընդհանրապես չի դրսևորվում, նախադպրոցական տարիքից արդեն սկսում են ի հայտ գալ սեռային ինքնահաստատման առաջին նշանները, ասենք, աղջիկներն սկսում են որոշ ուշադրություն դարձնել իրենց հագուստին, փորձում են օգտագործել իրենց մայրերի շպարման պարագաները, կանացի հագուստները, ի հայտ են գալիս կոկետության նշաններ, տղաները սկսում են նմանակել իրենց հայրերին կամ այլ տղմարդկանց առնական ատրիբուտները, ասենք, ձև են թափում, թե ծխախոտ են ծխում: Այս տարիքից սկսում է վառ ձևով ի հայտ գալ գլուխգովանությունը, որը որոշ դեպքերում ուղղված է սեռային ինքնահաստատմանը(ասենք, աղջիկը հայտարարում է, որ ինքը շատ գեղեցիկ է, լավ տիկնիկներ ունի, տղան հպարտանում է իր ուժով, զենքերով, հայտարարում է, թե իսկական մեքենա ունի և այլն): Դեռահասության տարիքը թերևս, սեռային ինքնահաստատման ամենավճռական շրջանն է: Իր երկարատև զարգացման ընթացքում(սկսած էմբրիոգենեզից) սեռային ոլորտը դեռահասության տարիքում որակական վերակառուցումներ է ապրում: Ձևավորվում են երկրորդային սեռային հատկությունները, ակտիվանում է սեռական պահանջմունքը, դեռահասին սկսում են հետաքրքրել սեռի հետ կապված հարցերը, առաջին սիրահարվածությունները ու սիրային հարաբերություններն են ի հայտ գալիս: Ինտենսիվորեն յուրացվում են սեռային դերերը, հարաբերությունները, վարքի ստերեոտիպերը, սեռային բարոյականության նորմերը և այլն: Այս տարիքում արթնանում է սեռային իքնագիտակցությունը, ձևավորվում է սեռային ես–կոնցեպցիան՝ սեփական ես–ի որպես տղամարդու/կնոջ մասին տեսությունը, սեռային ինքնագնահատականը՝ այն, թե ինչպիսին է ինքը որպես տղամարդ/ կին և, վերջապես, դեռահասը փորձում է ինքնահաստատվել որպես տղամարդ/կին:

Միջին հասունության տարիքից(մոտ 40 տարեկանից) սեռային ինքնահաստատմանն ուղղված ակտիվությունն աստիճանաբար անկում է ապրում, սեռային դերերը, առնական/կանացի բնավորության գծերը շեշտված բնույթ չեն կրում. «…Միջին տարիքից,– գրում են Ա.Ռ. և Ե.Ռ. Ալգեյերներները,– սեռային դերերը գնալով ավելի ու ավելի անէական են դառնում և մարդկանց մեջ սկսում են հայտնվել այնպիսի հատկություններ, որոնք ավանդաբար վերագրվում են հակառակ սեռին»[10, էջ 459]: Այս գործընթացի արդյունքում սեռային ինքնահաստատումն անէական է դառնում, այսինքն միջին և ուշ հասունության տարիքում հիմնականում մարդն այլևս սեռային ինքնահաստատման առումով նվազագույն ակտիվություն է դրսևորում կամ ընդհանրապես չի ի դրսևորում. այս տարիքում մարդն այլևս իր սեռի մեջ լիովին ինքնահաստատված է:

Սեռային ինքնահաստատման ֆրուստրացիային վերաբերող հետազոտությունների մենք չհանդիպեցինք գիտական գրականության մեջ: Սակայն ըստ մեզ, ինքնահաստատման յուրաքանչյուր ոլորտ ունի ոչ միայն դրսևորման, այլև ֆրուստրացիայի և դրա, անձի վրա ունեցած ազդեցության առանձնահատկություններ, տարբերություններ: Սեռային ինքնահաստատման ֆրուստրացիան հանդես է գալիս որպես առնական

կամ կանացի արժանապատվությանն ուղղված հարված: Անձը չի ընկալում իրեն որպես լիարժեք, լավ, հաջողակ տղամարդ/կին, ասենք գտնում է, որ ինքը կամ իր մարմնի մասերը տգեղ են, իրեն տղաները/աղջիկները չեն սիրի: Սեռային ինքնահաստատման պահանջմունքի պարագայում տղաները սկսում են անհանգստանալ իրենց սեռական ներուժի, սեռական ակտ կատարելու իրենց ունակության, աղջիկների հետ ծանոթանալու կարողության և նմանատիպ այլ հարցերի կապակցությամբ: Աղջիկների ֆրուստրացիան դրսևորվում է որպես հիասթափություն սեփական արտաքինից, դեպրեսիա, որոշ դեպքերում նյարդային անորեքսիան կարող է հանդես գալ որպես սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիայի հետևանք: Ըստ մեզ, սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան դեռահասության տարիքում տեղի է ունենում հետևյալ դեպքերում. ա/ մարմնի մասերի, մարմնակազմվածքի, դեմքի հետ կապված խնդիրների դեպքում (ասենք, պզուկների, տգեղ քթի, փոքր առնանդամի և նմանատիպ խնդիրների պարագայում), բ/ նույն սեռի հասակակիցների հետ հարաբերություններում ծագած խնդիրների պարագայում (ասենք, դեռահասին հասակակիցները ծեծել են, բոյկոտի են ենթարկել), գ/ հակառակ սեռի հետ հարաբերությունների ոլորտում (այդ թվում սեռական) ծագած խնդիրների դեպքում (տղայի/աղջկա կողմից սիրո մերժումը, ձեռք առնելը, վիրավորելը, անհաջող սեռական ակտը և այլն):

Այժմ քննենք սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիայի և դեռահասության ճգնաժամի կապը: Զարգացման ճգնաժամերի ֆրուստրացիոն կոնցեպցիան լայնորեն տարածված է հոգեբանության մեջ: Այս մոտեցման ակունքներում Զ. Ֆրոյդի լիբիդոյի և նևրոզների տեսությունը կարելի է համարել (ինքը Ֆրոյդը զարգացման ճգնաժամ հասկացությունը չի օգտագործում): Ավելի ուշ, Աննա Ֆրոյդն ավելի հստակ արտահայտվեց դեռահասության տարիքում սեռական պահանջմունքի ֆրուստրացիայի և դեռահասության ճգնաժամի վերաբերյալ: Ըստ հոգեվերլուծաբաններ Ֆ. և Ռ. Թայսոնների. «…կենսաբանական փոփոխությունները հզոր ազդեցություն են թողնում հոգեկան զարգացման վրա: Հորմոններով խթանվող իմպուլսների ալիքի հետ միասին նրանք արթնացնում են զարգացման ավելի վաղ մակարդակների կոնֆլիկտները, որոնք խախտում են սուպերէգոյի և էգոյի, բնազդների և պաշտպանությունների միջև լատենտ շրջանում ձեռք բերված հավասարակշռությունը՝ առաջ բերելով հոգեկան ակտիվության բուռն մղում: Սեռական և ագրեսիվ բնազդների ճնշման ուժգնացման շնորհիվ արթնանում են նախաէդիպյան և էդիպյան նախկին ցանկությունները և դրանց հետ կապված կոնֆլիկտները: Միայն թե հիմա դրանք կարող են սպառնալից բնույթ կրել, քանի որ պատանին արդեն ունի հետերոսեքսուալ սեռական հարաբերություններ հաստատելու համար անհրաժեշտ ներուժը: Առկա է ոչ միայն իրականացման պոտենցիալ հնարավորությունը, այլև, կոգնիտիվ հասունության շնորհիվ, պատանին կարող է գիտակցել մանկական ինցեստուոզ երազանքների նշանակությունը: Այս ամենի հետևանքով, նա մի կողմից աճող պահանջ է զգում ճնշելու իր վաղ շրջանի ցանկությունները, մյուս կողմից փորձում է ազատվել վաղ շրջանում սեռական բավարարման վրա դրված տաբուից (ինչն անհրաժեշտ է գենիտալ սեռական հարմարման համար): Վերջին հանգամանքը էլ ավելի է սրում առկա կոնֆլիկտը: … Պատանին պետք է իր բնազդները լիցքաթափելու այնպիսի ուղիներ գտնի, որոնք հասուն սեռական հարաբերությունների կառուցման համար անհրաժեշտ բնազ-

դային և հուզական ազատության առավելագույն մակարդակ ապահովեն: Դա նախ և առաջ ենթադրում է սեռականորեն ակտիվ ծնողների հետ հասուն նույնացումը, ինչը պատանուն հնարավորություն կտա խթանել սեփական սեռական ակտիվությունը… Հասուն գենիտալության բարեհաջող կազմակերպումը պահանջում է, որ ինցեստուոզ ցանկությունները շարունակվեն ճնշվել այնքան ժամանակ, քանի դեռ չեն կատարվել այս կարևոր նույնացումները» [9, էջ 79–80]: Արևմտյան հոգեբանության մեջ դեռահասության ճգնաժամի ֆրուստրացիոն կոնցեպցիան հիմնվում է Ռ. Հավիգուրստի զարգացման խնդիրների տեսության վրա: Այսպես, Ջ. Քոլմենը գտնում է, որ դեռահասության ճգնաժամը պայմանավորված է այն հանգամանքով, որ դեռահասը չի կարողանում հաջողությամբ լուծել տարիքային խնդիրները և դրանք կուտակվում են [ցիտ. ըստ 7, էջ 223–226]: Նշենք, որ որպես դեռահասության տարիքի խնդիրներ են համարվում. ա) սեփական արտաքինի ընդունումը , բ) կանացի և առնական դերերի յուրացումը, գ) հասակակիցների հետ հասուն հարաբերությունների կառուցումը, դ) ծնողներից անկախանալը, ե) մասնագիտական կարիերային նախապատրաստվելը, զ) ամուսնությանը նախապատրաստվելը, է) պատասխանատու վարքի ձևավորումը, ը) արժեքների համակարգի և բարոյական գիտակցության ձևավորումը [7, էջ 147–148]: Ռուս հոգեբանության մեջ տարիքային ճգնաժամերի ֆրուստրացիոն կոնցեպցիան զարգացնում էր Լ. Ի. Բոժովիչը: Ըստ հեղինակի. «…Ճգնաժամային շրջան ապրող երեխաների առանձնահատկությունները վկայում են նրանց ֆրուստրացվածության մասին: Ֆրուստրացիան, ինչպես հայտնի է, առաջանում է ի պատասխան մարդու համար էական ինչ–որ պահանջմունքների դեպրիվացիայի: Այդ իսկ պատճառով կարելի է եզրակացնել, որ երկու տարիքների սահմանագծում նման հակազդում են տալիս այն երեխաները, որոնց մեջ չեն բավարարվում կամ նույնիսկ ակտիվորեն ճնշվում են այն նոր պահանջմունքները, որոնք համապատասխան տարիքի նորագոյացությունների հետ հայտնվում են հոգեկան զարգացման յուրաքանչյուր փուլում» [2, էջ 195]:

Հեղինակն իր տեսությունը մեկնաբանում է կոնկրետ ճգնաժամային շրջաններում պահանջմունքների ֆրուստրացիայի առանձնահատկությունները քննելով: Այսպես, խոսելով երեք տարեկանի ճգնաժամի մասին հեղինակը գրում է. «… Վաղ մանկության վերջում ձևավորված կենտրոնական նորագոյացությունը «ես» համակարգն է և այդ նորագոյացության հիմքի վրա ձևավորված ինքնուրույն գործելու պահանջմունքը… Միանգամայն ակնհայտ է, որ նման հզոր պահանջմունքի առաջացումը պահանջում է էապես փոխել երեխայի կենսակերպը և նրա դաստիարակության նկատմամբ մանկավարժական մոտեցումը: Երեք տարեկանի ճգնաժամի բովանդակության հոգեբանական վերլուծությունը և ընթացքի բնույթը վկայում են, որ հենց այս պահանջմունքի դեպրիվացիան է կյանքի 2 և 3 տարեկանի սահմանագծում առաջ բերում դժվարություններ երեխայի վարքի մեջ» [2, էջ 201]: Դեռահասության ճգնաժամը, ըստ հեղինակի, նույնպես պահանջմունքների ֆրուստրացիայով է պայմանավորված. «Դեռահասության ճգնաժամը,– գրում է Լ.Ի. Բոժովիչը,– ի տարբերություն մյուս տարիքների ճգնաժամերի, ավելի սուր և ձգձգված բնույթ է կրում, քանի որ ֆիզիկական և մտավոր արագ զարգացման հետևանքով դեռահասի մեջ ի հայտ են գալիս մի շարք այնպիսի պահանջմունքներ, որոնք այդ տարիքի դպրոցականների ոչ բավարար սոցիալական զարգացման հետևանքով չեն կարող բավարարվել: Այսպիսով,

այս ճգնաժամային շրջանում պահանջմունքների դեպրիվացիան շատ ավելի ուժեղ և դժվար հաղթահարելի է, քանի որ դեռահասի ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման մեջ սինխրոնությունը բացակայում է» [2, էջ 229]: Ի տարբերություն հոգեվերլուծության ներկայացուցիչների, Լ.Ի. Բոժովիչը դեռահասության ճգնաժամը չի կապում սեռական պահանջմունքի ֆրուստրացիայի հետ: Ըստ հեղինակի. «…Այդ շրջանում առաջին անգամ հայտնվում և դեռահասի գիտակցության ու ապրման առարկա է դառնում նոր և շատ հզոր կենսաբանական պահանջմունք՝ սեռական պահանջմունքը: Անշուշտ, այդ պահանջմունքի դեպրիվացիան կարող է ֆրուստրացիայի ենթարկել դեռահասին և դրանով բացատրել նրա ինքնազգացողության և վարքի որոշ բնութագրեր: Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ սեռական մղումը, այնպես ինչպես մարդու բոլոր մյուս կենսաբանական պահանջմունքները, զարգացման ընթացքում ձեռք է բերում որակապես այլ, միջնորդավորված բնույթ… այդ մղման դեպրիվացիան (դեռահասի սոցիալական տհասության պատճառով) լուրջ ֆրուստրացնող գործոն չի հանդիսանում և որոշիչ դեր չի խաղում դեռահասության տարիքի ճգնաժամում: Ասվածից կարելի է եզրակացնել, որ անհիմն են թվում այդ, իր բնույթով բարդ տարիքային ճգնաժամը սեռական հասունացման փաստով բացատրելու փորձերը» [2, էջ 215]: Հեղինակը գտնում է, որ դեռահասության ճգնաժամը պայմանավորված է ինքնահաստատման և ինքնաարտահայտման պահանջմունքների ֆրուստրացիայով. «Գրականության մեջ եղած տվյալների և սեփական հետազոտությունների վրա հիմնվելով, մենք գտնում ենք,– գրում է հեղինակը,– որ դեռահասության ճգնաժամը կապված է այդ շրջանում ինքնագիտակցության նոր մակարդակի ի հայտ գալով: Այդ ինքնագիտակցության բնորոշ գծերից է այն, որ դեռահասի մեջ ընդունակություն է հայտնվում ճանաչել ինքն իրեն որպես անձ, որն ունի միայն իրեն բնորոշ, ուրիշ մարդկանցից տարբերվող հատկություններ: Դա դեռահասի մեջ ձգտում է առաջացնում ինքնարտահայտվելու, ինքնադրսևորվելու (այսինքն ձգտում է իրեն դրսևորել այն անձնային հատկություններով, որոնք ինքն արժեքավոր է համարում) և ինքնադաստիարակվելու: Հենց նշված պահանջմունքների դեպրվացիան էլ դեռահասության տարիքի ճգնաժամի հիմքն է հանդիսանում» [2, էջ 216]: Ցավոք, հեղինակը չի զարգացնում այս գաղափարը, չի նշում, թե կոնկրետ ինչ ինքնահաստատման և ինքնաարտահայտման մասին է խոսքը, ինչպես է ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան պայմանավորում ճգնաժամը, էմպիրիկական նյութով չի հաստատում իր ենթադրությունը: Չէ որ մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում է ձգտում ինքնահաստատվել և պարբերաբար այս ոլորտում ֆրուստրացիայի է ենթարկվում, հետևաբար նորմատիվ տարիքային ճգնաժամը չի կարող պայմանավորված լինել ընդհանրապես ինքնահաստատման ձգտման ֆրուստրացիայով, այն պետք է պայմանավորված լինի տվյալ տարիքին բնորոշ զարգացման որոշակի սթրեսոգեն օրինչափությամբ: Ըստ Ս. Խուդոյանի, դեռահասության տարիքը սեռային ակտիվության սուբյեկտի ձևավորման շրջանն է և բոլոր հիմնական նորագոյացություններն այդ գործընթացի քայլերն են: Այս տարիքի ճգնաժամը հեղինակը կապում է սեռային ինքնագիտակցության արթնացման հետ, սեռային ես–կոնցեպցիայի ձևավորմամբ, որպես սեռային ակտիվության սուբյեկտ կայացմանն, ինքնահաստատմանն ուղղված գործունեությամբ: Ըստ մեզ, հենց որպես սեռային ակտիվության սուբյեկտ ինքնահաստատվելու դեռահասի պա-

հանջմունքի, որպես տվյալ տարիքի օրինաչափորեն ի հայտ եկող նորագոյացության, ֆրուստրացիան էլ հանդես է գալիս որպես դեռահասության ճգնաժամի պատճառականության շղթայի կարևորագույն օղակ: Այլ կերպ ասած, մենք միանգամայն համաձայն ենք Լ.Ի. Բոժովիչի հետ, որ դեռահասության ճգնաժամի առաջացման կարևորագույն գործոններից մեկը ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան է, սակայն գտնում ենք, որ ճգնաժամի պատճառ է հանդիսանում ոչ թե ընդհանրապես ինքնահաստատման, այլ սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան: Ըստ որում, մենք այն կարծիքին ենք, որ դեռահասության ճգնաժամը պայմանավորված է ոչ թե մեկ, այլ մի շարք գործոններով՝ պատճառականության շղթայով: Օրինակ, լիովին կարելի է համաձայնել այն հեղինակների հետ, ովքեր դեռահասության ճգնաժամը կապում են՝ ա) դեռահասության տարիքում նույնականության ձևավորման դժվարությունների հետ (Է. Էրիքսոն), բ) ինդիվիդուացիայի(Փ. Բլոս), գ) դեռահասության տարիքում ինքնագիտակցության վերակառուցման (Ս. Խուդոյան), դ) դեռահասի մարգինալ վիճակի (Կ. Լևին), ե) դեռահասության տարիքում մարմնական փոփոխությունների հետ (Ս. Հոլ և ուրիշներ), տարիքային խնդիրների լուծման դժվարությունների հետ (Ռ. Հավիգուրստ և ուրիշներ), զ) զարգացման կենսաբանական, սոցիալական և հոգեբանական ուղղությունների անհամապատասխանությունը (Լ. Վիգոտսկի): Ըստ որում, նշված տարիքային օրինաչափություններն էլ իրենց հերթին պատճառական շղթա են կազմում: Այսպես, մարմնական փոփոխություններն առաջ են բերում նույնականության խնդիրներ, ձևավորվում է անձի նոր կերպար, ինչն էլ իր հերթին նպաստում է ինքնագիտակցության վերակառուցմանը (Ս. Խուդոյան), վերջինս էլ խթանում է ինդիվիդուացիայի գործընթացը:

Նշված բոլոր խմորումները մարգինալ վիճակի մեջ են դնում դեռահասին՝ կենսաբանական հասունացումը, ինքնագիտակցության ձևավորումն ավարտված չեն, հասուն նույնականությունը ձևավորված չէ, զարգացման հետերոխրոնության պատճառով կենսաբանական, սոցիալական և հոգեբանական հասունության մակարդակները չեն համապատասխանում, ինչն էլ իր հերթին դժվարացնում է տարիքային խնդիրների լուծումը: Ինչ տեղ է գրավում, ինչ դեր է խաղում սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան դեռահասության ճգնաժամի առաջացման պատճառահետևանքային շղթայում, վերջինիս մեջ ի՞նչ դիրք է գրավում, այսինքն ո՞ր օղակների հետ է անմիջականորեն կապված: Ըստ մեզ, սեռային ինքնահաստատման պահանջմունքի հիմքում ընկած է դեռահասության տարիքում սեռային ինքնագիտակցության արթնացումը. սեռային ինքնագիտակցության արթնացման հետևանքով դեռահասն ընկալում է սեփական անձը որպես սեռային ակտիվության սուբյեկտ (Ս. Խուդոյան) և ձգտում ինքնահաստատվել որպես այդպիսին: Ինքնահաստատման նպատակն է դրական սեռային ես–կոնցեպցիայի, ինքնավերաբերմունքի, ինքնահարգանքի ձևավորումը և հասակակիցների շրջանում ավելի բարձր դիրք գրավելու ձգտումը և այդ ամենի արդյունքում տարիքային խնդիրների ավելի հաջող լուծումը: Այլ կերպ ասած, տարիքային խնդիրների հաջող լուծումը մեծապես պայմանավորված է դեռահասի ինքնահաստատված լինելուց՝ դրական ես–կոնցեպցիայից և ինքնավերաբերմունքից, այն դիրքից, որ գրավում է դեռահասը հասակակիցների շրջանում: Սեռային ինքնահաստատման ֆրուստրացիան հանգեցնում է հուսահատության, ինքնագնահատականի՝

հետևաբար նաև հավակնությունների մակարդակի անկման, հասակակիցների կողմից արհամարհանքի, չընդունման (հասակակիցների կողմից ընդունվելը, ինչպես հայտնի է, դեռահասի համար չափազանց կարևոր հանգամանք է. հասակակիցների բացասական վերաբերմունքը, արհամարհանքը կարող է նույնիսկ ինքնասպանության հասցնել դեռահասին): Այլ կերպ ասած, մեր տեսանկյունից դեռահասության ճգնաժամի առաջացման պատճառահետևանքային շղթայում սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան միջանկյալ դիրք է գրավում սեռային ինքնագիտակցության արթնացման և տարիքային խնդիրների լուծման դժվարությունների միջև:

Սեռային ինքնահաստատման պահանջմունքի ակտուալացումը պայմանավորված է սեռային ինքնագիտակցության արթնացմամբ. բուն ինքնագիտակցության արթնացումը ճգնաժամ չի կարող հարուցել, ճգնաժամն ի հայտ է գալիս նոր ես–համակարգի ձևավորման դժվարությունների արդյունքում(այն պարզունակ հասարակություններում, որտեղ դեռահասին հստակ սեռային ակտիվության և ես–ի կոնցեպցիաներ են մատուցվում, ճգնաժամ, ինչպես հայտնի է, տեղի չի ունենում): Այդ դժվարություններից թերևս ամենանշանակալին սեռային ինքնահաստատման ոլորտում անհաջողություններն են, այդ պահանջմունքի ֆրուստրացիան: Վերջինս էլ խիստ դժվարացնում է տարիքային խնդիրների լուծումը(ասենք, ցածր ինքնագնահատական ունեցող դեռահասը լուրջ դժվարություններ է ունենում հակառակ սեռի հետ հարաբերություններում(, ինչը, ինչպես նշեցինք, մի շարք գիտնականներ համարում են դեռահասության ճգնաժամի հիմնական պատճառ: Հենց նշված հանգամանքն է, որ խիստ բուռն է դարձնում դեռահասի սեռային ինքնահաստատման ձգտումն ու ակտիվությունը, իսկ այդ ոլորտում անհաջողություններն առաջ են բերում խոր ճգնաժամ: Իհարկե, սեռային ինքնահաստատումը կարելի է դիտել որպես տարիքային խնդիր, սակայն այդ դեպքում, այն պիտի առանձնացվի մյուս խնդիրներից, դիտվի որպես մյուս խնդիրների լուծման արդյունավետությունը պայմանավորող միջոց:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 08. 09.2013 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Бароненко В.А., Рапопорт Л. А.** Здоровье и физическая культура студента. – М.: Альфа–М, 2003. – 418 с.
2. **Божович Л.И.** Проблемы формирования личности. Избр. Психол. Труды. Воронеж, КАП, 1995, – 352 с.
3. **Жарков С.** Стать мужчиной Пособие по взращиванию мужества. 2013 http://lib100.com/book/for_men/become_man/_%C6%E0%F0%EA%EE%E2%20%D1.%C2.,%20%D1%F2%E0%F2%FC%20%EC%F3%E6%F7%E8%ED%EE%E9.pdf
4. **Канапьянова Р. М.** Философия тендерного соотношения в структуре административногоуправленческой элиты. Алматы., Жибек Жодлы, 1998, 255 с.
5. **Кон И. С.** Введение в сексологию.– М.: Медицина, 1989. – 336 с.
6. **Маковеева О. С.** Анатомо – физиологический компонент в представлениях подростков старшего школьноговозраста // Известия Пензенского государственного педагогического университета им. В. Г. Белинского, 5, 2006, с. 124–128.
7. **Ремшмидт Х.** Подростковый и юношеский возраст. М., Мир, 1994. – 255 с.

8. **Соколинская Е. В., Дворянчиков Н. В.** Влияние полового самосознания на процессы адаптации у лиц пожилого и старческого возраста // Сексология и сексопатология. 2003, № 7. с. 13–16.
9. **Тайсон Ф., Тайсон Р.** Психоаналитические теории развития. Екатеринбург: Деловая книга, 1998, –528 с.
10. Allgeier A. R., Allgeier E. R., Sexual interactions. Toronto: D.Heath & comp.1988, 645 p.

ПОТРЕБНОСТЬ ПОЛОВОГО САМОУТВЕРЖДЕНИЯ, ЕЕ ФРУСТРАЦИЯ И ПОДРОСТКОВЫЙ КРИЗИС

ХУДОЯН САМВЕЛ

Заведующий кафедрой развития и прикладной психологии АГПУ им. Х. Абовяна, доктор психологических наук

ДАНИЕЛЯН САТЕНИК

Соискатель кафедры развития и прикладной психологии АГПУ им. Х. Абовяна

В статье дифференцируется понятие «половое самоутверждение», анализируются характеристики этого феномена, представляются возрастные особенности полового самоутверждения. Авторы объясняют подростковый кризис фрустрацией потребности в половом самоутверждении.

Дата представления статьи: 08.09.2013 г.

NEED OF SEXUAL SELF–AFFIRMATION, ITS FRUSTATION AND ADOLESCENT CRISIS

SAMVEL KHUDOYAN

Head of the Chair of Developmental and Applied Psychology, ASPU after Kh. Abovyan Doctor of Psychological Sciences

SATENIK DANIELYAN

Applicant of the Chair of Developmental and Applied Psychology, ASPU after Kh. Abovyan

The concept of “Sexual self–affirmation” is differentiated in the article. Characteristics of this phenomenon are analyzed and highlighted by the authors, as well as the age features of sexual self–affirmation are represented. Authors explain the adolescent crisis by frustration of need for sexual self–affirmation.

Article submission date 08.09.2013